որը Հասան-խանի օրով Պարսիկք եկեղեցւոյ մէջ ամորձիքներէն կախեցին։

Ճուճանցի Սահակ եպիսկոպոս՝ որոյ համար ներկայ առաջնորդը կը պատմէ թէ նա խաչեր և եկեղեցւոյ թանկագին զարդեր գողացեր է, վանքը աւերեր է։

Սիմոն վարդապետ որ գրած է Հասան խանի միջոցին ի Բագրեւանդ պատահած անցքերն, նոյն ժամանակի բռնակալներու գործերն ընտիր գրաբառով, այդ ձեռագիրն՝ որպէս շատ մի ձեռագրեր, յափշտակուած է և կգտնուի այժմ Զեռլկան գիւղացի Պօղոս Մուրատեանի մօտ։ Սիմոն չորս տարի առաջնորդութիւն վարելէն յետոյ՝ գիշերը առաջնորդարանին մէջ կսպանեն դաշոյնով։

(Որա վերան եւս ներկայ առաջնորդը վատ կը խօսի)։

Սիմոն վարդապետին յաջորդեց Զաքարիա, (ըստ պատմելոյ ներկայ առաջնորդի) մի տարւոյ չափ պաշտօն վարեց, վանքը աւերեց, կողոպտեց . . . ։

Որոյ և յաջորդած է ներկայ Յովհաննէս եպիսկոպոս Տէր Աստուածատուրեան որ երկար տարիներ վանահայր և Պայազիտի ու Բագրեւանդայ միանգամայն առաջնորդ է։

Յովհաննէս եպիսկոպոս 62 թուին վանքը շրջապատող պարիսպներն ի հիմանէ նորոգեց, 64 թուին ժառանգաւորաց վարժարան բացաւ, ուր ուսուցիչ կարգեց այժմեան Բլուր գիւղի Գէորգ քահանայն, որ բաւական աշակերտներ ունեցաւ, որոյ քանին այս օր քահանայ են։

Վանքս քանի հատ տապանաքարեր տեսայ, որոց գլխու մօտ սկաւառակաձեւ կոփուած էր, մի պառաւ ինձ ասաց որ անձրեւի ժամանակ այդտեղ հաւաքուած